«ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Արհուս, Դանիա, 23-27 մայիսի 2004 թ.

Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) «Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախմբի առաջին հանդիպումը տեղի ունեցավ սույն թվականի մայիսի 23-27-ը Դանիայի Արհուս քաղաքում: Այդ հանձնախմբում Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացնում էր Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: Սրբազանը հանդիսանում է նաև այդ հանձնախմբի համանախագահներից մեկը:

15 հոգուց բաղկացած հանձնախումբը զբաղվում է Եկեղեցիների և տարբեր կրոնական համայնքների միջև տեղի ունեցող աստվածաբանական երկխոսությունների հարցերով: «Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախումբը նեղ իմաստով ուսումնասիրություն կատարող մի հանձնախումբ չէ, որը կարող է միայն պատրաստել էկումենիկ փաստաթղթեր և դրանք ներկայացնել Եկեղեցիներին՝ ընդունելու համար, այլ այն նախաձեռնում և աջակցում է մի շարք երկկողմ և բազմակողմ հանդիպումների և երկխոսությունների՝ առանձնակի ուշադրություն դարձնելով զանազան մարտահրավերների աստվածաբանական կողմերի վրա: Այս իմաստով եկեղեցաբանական հարցերը համարվեցին որպես կարևոր թեմա հանձնախմբի քննարկումների համար:

«Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախմբի անդամները պետք է գործեն որպես ԵԵԿ գործունեության գործակիցներ և ուսումնասիրեն, թե «Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախմբի ծրագրերը ինչ աջակցություն կարող են ստանալ իրենց համապատասխան Եկեղեցիների կամ կազմակերպությունների կողմից:

«Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախումբը քննարկեց իր աշխատանքային հանձնարարականները և հստակեցրեց իր գործունեության առաջնային խնդիրները.

1. *Հարաբերությունները Ուղղափառ և Բարեփոխյալ Եկեղեցիների միջև*

- Պետք է շարունակվի աստվածաբանական համագործակցությունը ԵԵԿ-ի անդամ տարբեր հարանվանությունների միջև: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել Ուղղափառ և այլ անդամ Եկեղեցիների միջև պարզաբանումներ մտցնելու գործընթացն ուժեղացնելուն:
- Հատուկ ուշադրություն պետք է դարձնել քրիստոնեական միությանը, եկեղեցաբանությանը, ծառայությանը և աստվածաբանական ուսմանը:
- ԵԵԿ պետք է խրախուսի միջեկեղեցական երկխոսությունները և ներկա լինի դրանց ժամանակ որպես դիտորդ:
- Պետք է հստակեցնել Էկումենիկ հարաբերությունների համար պատասխանատու անձանց ցանց ԵԵԿ անդամ Եկեղեցիներից:

2. *Մեր ընդհանուր առաքելությունը Եվրոպայում*

• Ուսումնասիրություններ պետք է կատարվեն «առաքելություն», «քարոզչություն» և «հոգևորություն» հասկացությունների շուրջ՝ դրանց պարունակած իմաստների վերաբերյալ համաձայնության հասնելու համար: Եկեղեցիների միջև վարվելակերպեր պետք է առաջ քաշվեն և զարգացվեն:

3. *Մեծամասնություն և փոքրամասնություն հանդիսացող Եկեղեցիներ*

• Թե՛ մեծամասնություն, և՛ փոքրամասնություն հանդիսացող Եկեղեցիները պետք է հարգեն միմյանց ավանդույթները և հասարակությանը բերած ավանդը:

4. *Համագործակցություն Աստվածաբանական ֆակուլտետների և կրթական հաստատությունների միջև*

• ԵԵԿ պետք է խրախուսի և աջակցի Եկեղեցիների միջև ուսանողների փոխանակմանը կրոնական ուսուցման և աշխարհականների ու հոգևորականների էկումենիկ կրթության բնագավառներում և Եվրոպական հաստատությունների ուշադրությանը ներկայացնի այդ հարցի կարևորությունը:

5. *Ոգեկանությունը և աստվածպաշտությունը Եկեղեցիներում և էկումենիկ հավաքների ժամանակ*

• ԵԵԿ պետք է հնարավոր դարձնի միմյանց հետ կիսել ոգեկանության փորձառության զանազան ձևերը:

• «Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախումբը պետք է ուղիներ փնտրի՝ հեշտացնելու ոգեկանության խորը հասկացողության ըմբռնումը:

6. *Հարաբերություններն այլ կրոնական համայնքների հետ*

• Եվրոպայում Իսլամի հետ հարաբերությունների կոմիտեի աշխատանքները պետք է շարունակվեն Եվրոպայի Եպիսկոպոսների Կոնֆերանսների Խորհրդի հետ համագործակցաբար: Միջկրոնական երկխոսություն պետք է կազմակերպվի Եվրոպական հաստատությունների ներսում:

«Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախմբի հաջորդ հանդիպումը տեղի է ունենալու 2005 թ. մայիսի 28-ից հունիսի 2-ը, ուր քննարկվելու են Քարտա Էկումենիկայի և Ուղղափառ ու Բարեկարգյալ Եկեղեցիների միջև երկխոսության հետ կապված հարցեր:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին